Թողարկման 21-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2014

Հունվար

թիվ 1 (185)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Փրայմ Կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ն գրանցելու և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու, «Սոնա 79» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «ԹելՍել» դրամական փոխանցումներ իրականացնող ՓԲԸ-ի և «Իդրամ» դրամական փոխանցումներ իրականացնող ՍՊԸ-ի մասնաճյուղերը հաշվառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Նոր Հորիզոն» ներդրումային վարկային կազմակերպություն ՍՊԸ-ի «Արտաշատ» մասնաճյուղը գրանցելու, ինչպես նաև 1 ապահովագրական ՍՊԸ-ի, 3 ապահովագրական ՓԲԸ-ների, 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու և 1 ապահովագրական ՓԲԸ-ի, 7 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 279-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունիսի 7-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 280-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի թիվ 156-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 281-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 282-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի օգոստոսի 30-ի թիվ 211-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 283-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 284-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 313-Ն որոշումը «Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի ուղղությունները և այդ ծախսերի ու կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարների առավելագույն չափերը» կանոնակարգ 10/25-ը հաստատելու մասին»

37 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 314-Ն որոշումը «Կուտակային կենսաթոշակը միանվագ վճարի տեսքով վճարվելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը» կանոնակարգ 10/08-ը հաստատելու մասին»

39 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 1 պաշտոնական պարզաբանումը «Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի պարտավորությունը Հայաստանի Հանրապետության և երաշխիքային ֆոնդի նկատմամբ»

43 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել*** «Փրայմ Կապիտալ» ներդրումային սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում իրականացնելու նպատակով (որոշում թիվ 6Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Սոնա 79» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի թիվ 741 լիցենզիան (որոշում թիվ 10Ա):
- ***Դադարեցվել են*** «Թել-Սել» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական և «Իդրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների համապատասխանաբար «Թել-Սել Պլանետա» և «Հյուսիսային», «Նոր Նորք» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 13Ա, 14Ա):
- ***Գրանցվել է*** «Նոր Հորիզոն» ներդրումային վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արտաշատ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/48Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ, 3 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունների և 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 3105000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/03Ա-1/06Ա, 1/39Ա), 1 ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության, 7 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/07Ա, 1/32Ա-1/38Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունիսի 7-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իգ[1]» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման աճուրդի, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման», «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության», «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 142-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման աճուրդի, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման» (այսուհետ՝ հավելված 1), «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի պահառության գործունեության» (այսուհետ՝ հավելված 2), «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման» (այսուհետ՝ հավելված 3), «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման (այսուհետ՝ հավելված 4)», «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության» (այսուհետ՝ հավելված 5) և «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» (այսուհետ՝ հավելված 6) կարգերում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելված 1-ի 3-րդ կետի 9-րդ ենթակետը վերջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
«Ենթապահառուն կարող է բացել և վարել նաև անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներ:»,

2) հավելված 2-ի 4-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«***կենտրոնական դեպոզիտարիա***՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»,

3) հավելված 2-ի 4-րդ կետը լրացնել 7-րդ և 8-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.
«7) ***անվանատեր***՝ անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը:
8) ***անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ***՝ արժեթղթերի հաշվի հատուկ տեսակ, որում անվանատիրոջ անունով հաշվառվում են այլ անձանց պատկանող արժեթղթերը: Անվանատիրոջ արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերը չեն ընդգրկվում անվանատիրոջ լուծարային միջոցների մեջ՝ անվանատիրոջ լուծարման դեպքում: Արժեթղթերով ամրագրված (արժեթղթերից բխող) իրավունքների իրականացման ժամանակ անվանատերը պարտավոր է հետևել հաճախորդի (արժեթղթի սեփականատիրոջ) ցուցումներին:»,

4) հավելված 2-ի 6-րդ կետում «երկմակարդակ պահառուական համակարգով» բառերը հանել,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.01.2014 թ. (ՀՀՊՏ N3 (482), 1.02.2014):

5) հավելված 2-ի 7-րդ կետը 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ենթապահառուի գործառույթներ կարող են իրականացնել նաև պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած այն կազմակերպությունները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է արժեթղթերի շուկայում զբաղվել արժեթղթերի պահառությամբ: Ենթապահառուն կարող է բացել և վարել նաև անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներ:»,

6) հավելված 2-ի 8-րդ կետի «ներդրողների» բառից հետո լրացնել «կամ անվանատերերի» բառերը,

7) հավելված 2-ի 10-րդ կետի երկրորդ նախադասության «պարտատոմսերի գրավառուն» բառերից հետո լրացնել «կամ անվանատերը» բառերը,

8) հավելված 2-ը 15-րդ կետից հետո լրացնել 15.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«15.1. Կենտրոնական դեպոզիտարիայի՝ որպես ենթապահառուի և իր հաճախորդների միջև կնքվող պայմանագրում պետք է հղում պարունակվի Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններին:»,

9) հավելված 2-ը 21-րդ կետից հետո լրացնել 21.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21.1. Կենտրոնական դեպոզիտարիայի՝ որպես ենթապահառուի ներքին աշխատանքային ընթացակարգերը պետք է համապատասխանեն Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններին:»,

10) հավելված 2-ը 27-րդ կետից հետո լրացնել 27.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«27.1. Ենթապահառուի մոտ պարտադիր հաշվառման են ենթակա արժեթղթերի անվանատերերին սեփականության իրավունքով պատկանող բոլոր պարտատոմսերը: Ենթապահառուի մոտ առանձին ամփոփ ձևով հաշվառման են ենթակա արժեթղթերի անվանատիրոջ հաճախորդներին պատկանող պարտատոմսերը: Ենթապահառուի և արժեթղթերի անվանատիրոջ մոտ հաշվառված տվյալներն ամփոփ ձևով պետք է լիովին համապատասխանեն միմյանց: Ենթապահառուն անվանատիրոջ հետ կնքվող պայմանագրում պետք է ներառի դրույթներ, համաձայն որոնց անվանատերը պահառուին փոխանցում է բավարար տեղեկատվություն, որն անհրաժեշտ է անվանատիրոջ արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերի կարգավիճակի (ազատ, գրավադրված, կալանված, գրավադրված կալանված) որոշման համար:»,

11) հավելված 2-ը 39-րդ կետից հետո լրացնել 39.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«39.1. Կենտրոնական դեպոզիտարիան՝ որպես ենթապահառու, հաճախորդների սպասարկումն իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններին համապատասխան:»,

12) հավելված 3-ի 3-րդ կետի 4-րդ ենթակետի 2-րդ նախադասության ««Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն» բառերը փոխարինել «Կենտրոնական դեպոզիտարիան» բառերով,

13) հավելված 3-ի 3-րդ կետի 4-րդ ենթակետը 2-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ենթապահառուի գործառույթներ կարող են իրականացնել նաև պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած այն կազմակերպությունները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է արժեթղթերի շուկայում զբաղվել արժեթղթերի պահառությամբ: Ենթապահառուն կարող է բացել և վարել նաև անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներ:»,

14) հավելված 3-ի 3-րդ կետը 12-րդ ենթակետից հետո լրացնել 13-րդ, 14-րդ, 15-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13) ***անվանատեր***՝ անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը,

14) ***անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ***՝ արժեթղթերի հաշվի հատուկ տեսակ, որում անվանատիրոջ անունով հաշվառվում են այլ անձանց պատկանող արժեթղթերը: Անվանատիրոջ արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերը չեն ընդգրկվում անվանատիրոջ լուծարային միջոցների մեջ՝ անվանատիրոջ լուծարման դեպքում: Արժեթղթերով ամրագրված (արժեթղթերից բխող) իրավունքների իրականացման ժամանակ անվանատերը պարտավոր է հետևել հաճախորդի (արժեթղթի սեփականատիրոջ) ցուցումներին,

15) ***Կենտրոնական դեպոզիտարիա***՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»,

15) հավելված 3-ը 5-րդ կետից հետո լրացնել 5.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1) Կենտրոնական դեպոզիտարիան՝ որպես ենթապահառու, գրավի հետ կապված գործառնություններն իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններին համապատասխան:»,

16) հավելված 3-ի 8-րդ կետում «երկմակարդակ պահառուական համակարգով՝» բառերը հանել,

17) հավելված 3-ի 8-րդ կետը 4-րդ ենթակետից հետո լրացնել 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) Պարտատոմսերի նկատմամբ գրավի իրավունքի գրանցումը և գրավի հետ կապված գործառնությունների կատարումը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններին համապատասխան:»,

18) հավելված 3-ի 9-րդ կետը 12-րդ ենթակետից հետո լրացնել 13-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13) Կենտրոնական դեպոզիտարիան գրավի հետ կապված գործառնություններն իրականացնում է Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններին համապատասխան:»,

19) հավելված 4-ի 2-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթապահառու՝ պահառության գործունեություն իրականացնող անձ, որը վարում է ներդրողների դեպո հաշիվները: Սույն կարգի իմաստով՝ ենթապահառու են պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, Գանձապետական պահառուն և Կենտրոնական դեպոզիտարիան: Ենթապահառուի գործառույթներ կարող են իրականացնել նաև պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած այն կազմակերպությունները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է արժեթղթերի շուկայում զբաղվել արժեթղթերի պահառությամբ: Ենթապահառուն կարող է բացել և վարել նաև անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներ: Կենտրոնական դեպոզիտարիան ենթապահառուական ծառայություններ մատուցում է միայն ներդրողների և անվանատերերի համար: Գանձապետական պահառուն ենթապահառուական ծառայություններ մատուցում է միայն ներդրողների համար:»,

20) հավելված 4-ի 2-րդ կետը 12-րդ ենթակետից հետո լրացնել 13-րդ, 14-րդ, 15-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13) անվանատեր՝ անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը,

14) անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ՝ արժեթղթերի հաշվի հատուկ տեսակ, որում անվանատիրոջ անունով հաշվառվում են այլ անձանց պատկանող արժեթղթերը: Անվանատիրոջ արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերը չեն ընդգրկվում անվանատիրոջ լուծարային միջոցների մեջ՝ անվանատիրոջ լուծարման դեպքում: Արժեթղթերով ամրագրված (արժեթղթերից բխող) իրավունքների իրականացման ժամանակ անվանատերը պարտավոր է հետևել հաճախորդի (արժեթղթի սեփականատիրոջ) ցուցումներին,

15) Կենտրոնական դեպոզիտարիա՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»,

21) հավելված 4-ի 4-րդ կետի 1-ին ենթակետի բ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. ենթապահառուի ներդրողների և անվանատերերի պարտատոմսերի ամփոփ դեպո հաշիվներ.»,

22) հավելված 4-ի 7-րդ կետի 1-ին ենթակետի 2-րդ աղյուսակի 3-րդ սյունակի 3-րդ տողի 4-րդ պարբերությունում «Ներդրողներին պատկանող» բառերը փոխարինել «Ներդրողների և անվանատերերի» բառերով,

23) հավելված 4-ի 13-րդ կետի առաջին նախադասության մեջ «ներդրողներին պատկանող» բառերը փոխարինել «ներդրողների և անվանատերերի» բառերով,

24) հավելված 4-ի 13-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Կենտրոնական դեպոզիտարիայի և Գանձապետական պահառուի համար բացվում է միայն ներդրողների և անվանատերերի արժեթղթերի ամփոփ դեպո հաշիվ, ընդ որում՝ Գանձապետական պահառուի դեպքում նշված հաշվում հաշվառվում են միայն ներդրողներին պատկանող պարտատոմսերը,»,

25) հավելված 4-ի 14-րդ կետի 1-ին ենթակետի 2-րդ աղյուսակի 3-րդ սյունակի 3-րդ տողի 2-րդ պարբերությունում «Ներդրողներին պատկանող» բառերը փոխարինել «Ներդրողների և անվանատերերի» բառերով,

26) հավելված 4-ի 18-րդ կետում «5. այլ ֆիզիկական անձ» բառերից հետո լրացնել նոր տող՝ հետևյալ բովանդակությամբ.
«6. անվանատեր:»,
27) հավելված 4-ի 19-րդ կետի 1-ին ենթակետում «ներդրողների» բառից հետո լրացնել «և անվանատերերի» բառերը,
28) հավելված 5-ի 2-րդ կետի 7-րդ ենթակետը 2-րդ նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ.
«Ենթապահառուի գործառույթներ կարող են իրականացնել նաև պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած այն կազմակերպությունները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրվում է արժեթղթերի շուկայում զբաղվել արժեթղթերի պահառությամբ: Ենթապահառուն կարող է բացել և վարել նաև անվանատիրոջ արժեթղթերի հաշիվներ:»,
29) հավելված 5-ի 2-րդ կետը 17-րդ ենթակետից հետո լրացնել 18-րդ, 19-րդ, 20-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.
«18) ***անվանատեր***՝ անձ, որի անունով, առանց սեփականության իրավունքի փոխանցման, հաշվառվում են այլ անձանց պատկանող անվանական արժեթղթերը,
19) ***անվանատիրոջ արժեթղթերի հաշիվ***՝ արժեթղթերի հաշվի հատուկ տեսակ, որում անվանատիրոջ անունով հաշվառվում են այլ անձանց պատկանող արժեթղթերը: Անվանատիրոջ արժեթղթերի հաշվում հաշվառվող արժեթղթերը չեն ընդգրկվում անվանատիրոջ լուծարային միջոցների մեջ՝ անվանատիրոջ լուծարման դեպքում: Արժեթղթերով ամրագրված (արժեթղթերից բխող) իրավունքների իրականացման ժամանակ անվանատերը պարտավոր է հետևել հաճախորդի (արժեթղթի սեփականատիրոջ) ցուցումներին,
20) ***կենտրոնական դեպոզիտարիա***՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:»,
30) հավելված 5-ի 10-րդ կետը «պահառուի» բառից հետո լրացնել «կամ Կենտրոնական դեպոզիտարիայի» բառերով,
31) հավելված 5-ը 16-րդ կետից հետո լրացնել 17-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«17) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից երկրորդային շուկայում պարտատոմսերով գործարքների հետ կապված հաշվարկներն իրականացվում են Կենտրոնական դեպոզիտարիայի արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով սահմանված կարգով:»,
32) հավելված 6-ի Հավելված 1-ը 5-րդ կետից հետո լրացնել 6-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«6. Սույն հավելվածում նշված ենթահաշիվներին առնչվող պահանջները չեն տարածվում Կենտրոնական դեպոզիտարիայի վրա: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ որպես ենթապահառու, պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է 2014 թվականի փետրվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., N279-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի թիվ 156-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասը, 29-րդ հոդվածի 2-րդ մասը, 30-րդ հոդվածի 2-րդ մասը և 42-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը» կանոնակարգ 10/09-ը հաստատելու մասին» թիվ 156-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը» կանոնակարգ 10/09-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Կանոնակարգի 4-րդ կետում հանել «Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված գումարը փոխանցելու օրը» բառերը, իսկ «տրամադրված» բառից հետո լրացնել «և հրապարակված վերջին հայտնի» բառերով:
2) Կանոնակարգի 7-րդ կետում՝
   ա. «30-օրյա ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «30-օրյա ժամկետի ավարտից հետո, սակայն ոչ ուշ, քան հաջորդող առաջին աշխատանքային օրը» բառերով,
   բ. 2-րդ և 3-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) յուրաքանչյուր անձի համար (օգտին) կատարված կուտակային վճարի դիմաց տվյալ անձի կենսաթոշակային հաշվին է փոխանցում սույն կետի 1-ին ենթակետին համապատասխան ընտրված ֆոնդի՝ կուտակային վճարին համարժեք քանակով փայեր՝ հիմք ընդունելով տվյալ ֆոնդի փայի վերջին հայտնի (սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված և հրապարակված) տեղաբաշխման գինը,

   3) անձի համար (օգտին) կատարված կուտակային վճարին համարժեք գումարը փոխանցում է համապատասխան ֆոնդի պահառուի նշած հաշվին,»:
3) Կանոնակարգի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «8. Ֆոնդի կառավարիչը յուրաքանչյուր աշխատանքային օր հաշվարկում և մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 15:00-ն մասնակիցների ռեեստրը վարողին է տրամադրում իր կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդի փայի հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման (մարման) գները: Մասնակիցների ռեեստրը վարողը ֆոնդի փայի հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման (մարման) գները կառավարչից ստանալուց հետո դրանք անմիջապես հրապարակում է իր ինտերնետային կայքում: Կառավարիչը սույն կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրելու հետ միաժամանակ հրապարակում է իր ինտերնետային կայքում:»:
4) Կանոնակարգի 17-րդ կետում «դիմումը և փայի դիմաց վճարումը կամ վճարման մասին պահառուից հավաստումը (եթե ֆոնդի պահառուն մասնակիցների ռեեստրը վարողը չէ)» բառերը փոխարինել «համար վճարումը» բառերով:
5) Կանոնակարգի 18-րդ կետում «դիմաց վճարումը համապատասխան ֆոնդի պահառուի նշած հաշվին կատարելու (վճարման մասին պահառուից հավաստումը ստանալու) օրը սույն կանոնակար-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.01.2014 թ. (ՀՀՊՏ N3 (482), 1.02.2014):

գի 8-րդ կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված» բառերը փոխարինել «՝ սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված և հրապարակված վերջին հայտնի» բառերով:

6) Կանոնակարգի 19-րդ կետում «կառավարչից իր կողմից կառավարվող ֆոնդի փայեր ձեռք բերելու դիմումը ստանալուց հետո» բառերը փոխարինել «կառավարչի հաշվին սույն կանոնակարգի 17-18-րդ կետերի համաձայն փայերը փոխանցելուց հետո» բառերով:
7) Կանոնակարգի 20-րդ կետում «3» թիվը փոխարինել «10» թվով:
8) Կանոնակարգի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«23. Սույն կանոնակարգի 20-րդ կետով նախատեսված դեպքում փայերի հետգնում (մարում) կատարվում է՝ հիմք ընդունելով տվյալ ֆոնդի փայի՝ դիմումը ներկայացնելու պահի դրությամբ սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված և հրապարակված վերջին հայտնի հետգնման (մարման) գինը:»:

9) Կանոնակարգի 9-րդ, 13-րդ, 16-րդ, 21-րդ, 22-րդ և 24-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., N280-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով արժեթղթերի հաշվառման համակարգում արժեթղթերով գործարքների վերաբերյալ գրանցումների իրականացման գործընթացը դարձնել ավելի դյուրին և նվազ ծախսատար,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 176-րդ, 182-րդ, 194-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ում՝

1) 4-րդ կետը «(որի միջոցով կնքվել է պահառության պայմանագիր)» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն կանոնակարգի 4.1 կետով սահմանված դեպքերի» բառերով,

2) լրացնել 4.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1. Կենտրոնական դեպոզիտարիան կարող է իր կանոններով նախատեսված չափանիշները բավարարող ֆինանսական կազմակերպությունների (այդ թվում՝ օտարերկրյա) համար սահմանել սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված պահանջից բացառություններ:»,

3) լրացնել 14.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«14.1. Պահառության պայմանագիրը լուծվելու դեպքում դրա հիմքով վարվող արժեթղթերի հաշիվը կարող է փակվել, եթե հաշվում գրանցված արժեթղթեր չկան (արժեթղթերի հաշվի մնացորդը զրոյական է): Եթե արժեթղթերի հաշվի մնացորդը զրոյական չէ, ապա պահառության պայմանագիրը կարող է լուծվել միայն արժեթղթերը հաշվետիրոջ կողմից նշված այլ արժեթղթերի հաշվին փոխանցելուց հետո:»,

4) լրացնել 21.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21.1. Բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարման պայմանագիրը կարող է լուծվել միայն այլ հաշվի օպերատորի միջոցով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման արդյունքում, բացառությամբ թողարկողի լուծարման կամ վերակազմավորման այն դեպքերի, որի արդյունքում «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընկերությունը պարտավոր չէ բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնել մասնագիտացված կազմակերպությանը:»,

5) 91-րդ կետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, եթե արժեթղթերի հաշվառման համակարգում գործառնություն իրականացնելու հանձնարարական կամ հարցում տալու լիազորագիրը հաստատված չէ նոտարական կարգով, ապա հաշվի օպերատորը պարտավոր է ողջամիտ միջոցներ ձեռնարկել լիազորության հավաստիությունը ստուգելու համար:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., N281-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.01.2014 թ. (ՀՀԳՏ N3 (482), 1.02.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի օգոստոսի 30-ի թիվ 211-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման գործընթացը դարձնել ավելի դյուրին և նվազ ծախսատար,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 10-րդ կետերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի օգոստոսի 30-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և հաշվի օպերատորների գործունեության կարգը» կանոնակարգ 5/15-ը հաստատելու մասին» թիվ 211-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման և հաշվի օպերատորների գործունեության կարգը» կանոնակարգ 5/15-ում՝

1) 34-րդ և 35-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,
2) Հավելված 1-ի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Հաշվի օպերատորը պարտավոր է մասնակցի պահանջով նրան տրամադրել Կանոնակարգ 10/07-ով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 17-ի թիվ 629-Ն որոշմամբ նախատեսված որևէ դիմումի ձևի թղթային տարբերակը, որը մասնակիցը կարող է ինքնուրույն լրացնել և ներկայացնել օպերատորին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., Ն282-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.01.2014 թ. (ՀՀԳՏ Ն3 (482), 1.02.2014):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով խրախուսել նոր արժեթղթերի թողարկման գործընթացը, ինչպես նաև

հաշվի առնելով, որ միջազգային կազմակերպությունները համարվում են վստահելի և իրենց պարտականությունները գիտակցող կազմակերպություններ, ուստի դրանց նկատմամբ թափանցիկության մեղմ պահանջների կիրառումը չի հանգեցնի ներդրողների շահերի վտանգման և միաժամանակ կշահագրգռի այս կազմակերպությունների կողմից նոր թողարկումների իրականացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերը, 2-րդ մասի 6-րդ կետը, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերը, 8-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերը, 9-րդ հոդվածի 4-րդ մասը, 10-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 4-րդ կետը, 17-րդ հոդվածը, 18-րդ հոդվածի 3-րդ մասը, 22-րդ հոդվածը, 23-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 119-րդ հոդվածի 2-րդ մասը, 121-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 2-րդ և 3-րդ մասերը, 126-րդ հոդվածի 2-րդ մասը, 127-րդ հոդվածի 1-ին, 4-րդ 8-րդ և 10-րդ մասերը, 207-րդ հոդվածի 1-ին մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4/04) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգ 4/04-ը լրացնել 5.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Սույն կանոնակարգի 5-րդ և 6-րդ բաժիններով սահմանված դրույթները չեն տարածվում սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպությունների թողարկած ոչ բաժնային արժեթղթերի վրա, եթե կոնկրետ իրավական նորմի բովանդակությունում ուղղակիորեն նշված չէ, որ այն վերաբերում է վերոնշյալ միջազգային կազմակերպություններին:»:

2) Կանոնակարգ 4/04-ը լրացնել 41.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«41.1. Սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպություններն անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում այն կառուցվածքով և ժամկետում, որոնք, որպես կանոն, կիրառվում են միջազգային կազմակերպությունների կողմից այլ կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալու դեպքում:»:

3) Կանոնակարգ 4/04-ը լրացնել 45.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«45.1. Սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպությունները միջանկյալ հաշվետվությունները հրապարակում են իրենց ինտերնետային կայքում այն կառուցվածքով և ժամկետում, որոնք, որպես կանոն, կիրառվում են միջազգային կազմակերպությունների կողմից այլ կարգավորվող շուկաներում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալու դեպքում:»:

4) Կանոնակարգ 4/04-ը լրացնել 46.3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«46.3. Սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպությունները սույն կանոնակարգի 41.1-րդ և 45.1-րդ կետերի համաձայն հրապարակված տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հրապարակման ներկայացնելու կամ հրապարակելու օրը ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգի միջոցով (ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով), կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում են Կենտրոնական բանկին այդ մասին՝ ներկայացնելով նաև դրանց հրապարակման հասցեն:»:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.01.2014 թ. (ՀՀՊՏ N3 (482), 1.02.2014):

5) Կանոնակարգ 4/04-ի 47-րդ կետում «և 46.2-րդ» բառերը փոխարինել «46.2-րդ և 46.3-րդ» բառերով:

6) Կանոնակարգ 4/04-ը լրացնել Գլուխ 24.1-ով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 24.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՂ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

56.1. Սույն կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված միջազգային կազմակերպություններ հանդիսացող հաշվետու թողարկողների համար էական փաստեր և տեղեկություններ են համարվում արժեթղթերի թողարկման էական պայմանները, որոնց կազմում փոփոխությունները բացահայտվում են թողարկողի ինտերնետային կայքում տվյալ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

56.2. Միջազգային կազմակերպությունները էական փաստերը և տեղեկությունները հրապարակման ներկայացնելու կամ հրապարակելու օրը ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգի միջոցով (ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով) կամ էլեկտրոնային փոստով տեղեկացնում են Կենտրոնական բանկին այդ մասին՝ ներկայացնելով նաև դրանց հրապարակման հասցեն:

56.3. Կենտրոնական բանկը հրապարակում է սույն գլխի 56.2-րդ կետի համաձայն ստացված տեղեկացումն իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ դրա ստացման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում:»:

7) Կանոնակարգ 4/04-ի Հավելված 2-ում «ՉԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ԲԱԺՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» բառերը փոխարինել «ՉԻ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ԲԱԺԻՆԸ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., N283-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացվող դիմումների միասնական ձևերի և դրանց ներկայացման կարգի սահմանման միջոցով ապահովել դրանց ներկայացման ընթացակարգի պարզություն, ինչպես նաև դիմումների լրացման ուղեցույցների միջոցով խուսափել դիմումների երկիմաստ բովանդակություններից,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 38-րդ հոդվածի 1-ին մասը, 54-րդ հոդվածի 2-րդ մասը, 55-րդ հոդվածի 1-ին մասը, 61-րդ հոդվածի 6-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի փոխանակման, կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկությունների ստացման, կենսաթոշակի տեսակի ընտրության, մասնակցի միջոցները նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցները օտարերկրյա կենսաթոշակային համակարգին միանվագ վճար կատարելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերի ստացման դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին» թիվ 171-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին»:

2. Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է)»:

3. Որոշմամբ հաստատված կանոնակարգ 10/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.01.2014 թ. (ՀՀԳՏ N3 (482), 1.02.2014):

փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին»:

2) Կանոնակարգի Հավելված 1-ը, Հավելված 2-ը, Հավելված 3-ը, Հավելված 4-ը, Հավելված 5-ը, Հավելված 6-ը, Հավելված 7-ը, Հավելված 8-ը, Հավելված 9-ը, Հավելված 10-ը, Հավելված 11-ը և Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար հավելված 1-ի, հավելված 2-ի, հավելված 3-ի, հավելված 4-ի, հավելված 5-ի, հավելված 6-ի, հավելված 7-ի, հավելված 8-ի, հավելված 9-ի, հավելված 10-ի, հավելված 11-ի և հավելված 12-ի (կցվում են):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., N284-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 284-Ն որոշմամբ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 10/07-ի

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԸՆՏՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

Ա. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար	2. անուն	3. ազգանուն

4. ծննդյան ամսաթիվ	5. սեռ	6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ	7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար

8. քաղաքացիություն	9. կենսական շահերի կենտրոն	10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար	11. ՀՎՀՀ

Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ

12. ստացման եղանակ				13. լեզու						
	12.1. փոստով		12.2. էլեկտրոնային փոստով		13.1. հայերեն		13.2. ռուսերեն		13.3. անգլերեն	

Գ. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

14. փոստային ինդեքս	15. երկիր	16. վարչատարածքային միավոր	17. համայնք (վարչական շրջան)	18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան

19. հեռախոսի համար	20. բջջային հեռախոսի համար	21. էլեկտրոնային փոստի հասցե

Դ. ԸՆՏՐՎԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ

22. ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և ֆոնդ

	Կառավարչի անվանում
	ֆոնդի անվանում
	ֆոնդի անվանում
	ֆոնդի անվանում
	Կառավարչի անվանում
	ֆոնդի անվանում
	ֆոնդի անվանում
	ֆոնդի անվանում

23. ֆոնդի գաղտնագրված ծածկագիր

ՀԱՎԱՍՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ԵՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ, ՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՁ ՈՒՂԱՐԿՎԻ ՍՈՒՅՆ ԴԻՄՈՒՄՈՎ ՆՇՎԱԾ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՎ ՀԱՍՑԵՈՎ, ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ ԴՐԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻՍ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

ՀԱՎԱՍՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՍՈՒՅՆ ԴԻՄՈՒՄՈՒՄ ՖՈՆԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼ ԵՄ ՍԱՀՄ ՄՏՔՈՎ, ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՄՌԼՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ:

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ ԸՆՏՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԵՏ:

Մասնակցի/ լիազորված անձի ստորագրություն _____

ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԸ ԻՐ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՐՋԱՆԱԿՈՒՄ ՉԻ ԳՈՎԱԶԴՈՒՄ ՈՐԵՎԷ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՉԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ԿԵՐՊ ՉԻ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ:

ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ԸՆՏՐԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

ՍՈՒՅՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՒՄ Է ՎՃԱՐ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՂ ՍԱԿԱԳՆԵՐԻ:

24. ամսաթիվ	25. մասնակցի ստորագրություն	26. լիազորված անձի անուն, ազգանուն	27. լիազորված անձի ստորագրություն

էջը լրացնելիս օգտվեք դիմումի դարձերեսին տեղադրված ուղեցույցից

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 284-Ն որոշմամբ

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 10/07-ի

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու դիմումի լրացման ուղեցույց

1. «1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը, իսկ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում լրացվում է հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (սույն վանդակը լրացվելիս 2-21-րդ վանդակները լրացվում են ինքնաշխատ, եթե մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ հնարավորությունն ապահովված է),
2. «2. անուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի անունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
3. «3. ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ազգանունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
4. «4. ծննդյան ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ 01/01/1990,
5. «5. սեռ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի սեռը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ իգական՝ Ի, արական՝ Ա,
6. «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված մասնակցի անձը հաստատող վավեր փաստաթղթի տեսակը,
7. «7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի վավեր անձնագրի սերիան և համարը կամ անձը հաստատող այլ վավեր փաստաթղթի նույնականացման համարը, եթե «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում լրացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված անձնագրից բացի այլ փաստաթուղթ, կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի անձնագրի կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթի նույնականացման համարը,
8. «8. քաղաքացիություն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի քաղաքացիությունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, իսկ քաղաքացիության բացակայության դեպքում լրացվում է «քաղաքացիություն չունեցող անձ»,
9. «9. կենսական շահերի կենտրոն» վանդակում պարտադիր լրացվում է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի կենսական շահերի կենտրոնը (կենսական շահերի կենտրոնն այն վայրն է, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը (բնակության վայրն այն վայրն է, որտեղ անձը մշտապես կամ առավելապես ապրում է), և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը),
10. «10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հաշվառման համարը,
11. «11. ՀՎՀՀ» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը,
12. «12. ստացման եղանակ» դաշտում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-աձև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը),
13. «13. լեզու» դաշտում ձախից V-աձև նշումով դիմումատուի ցանկությամբ ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվությունը ստանալու մասնակցի նախընտրելի լեզուն, ընդ որում, կարելի է ընտրել «13.1. հայերեն», «13.2. ռուսերեն» կամ «13.3. անգլերեն» տարբերակներից միայն մեկը, իսկ եթե որևէ ընտրություն չի կատարվում, ապա տեղեկատվությունն ուղարկվում է հայերեն,
14. «14. փոստային ինդեքս» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության վայրի փոստային ինդեքսը,
15. «15. երկիր» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության երկրի անվանումը,

16. «16. վարչատարածքային միավոր» վանդակում պարտադիր լրացվում է մարզի անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը, իսկ Երևան համայնքի դեպքում՝ «Երևան» (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի վարչատարածքային միավորի անվանումը),
17. «17. համայնք (վարչական շրջան)» վանդակում պարտադիր լրացվում է մարզի համայնքի (քաղաքային, գյուղական), իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանի (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի համայնքային միավորի) անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը,
18. «18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան» վանդակում հաջորդաբար պարտադիր լրացվում են բնակավայրի անվանումը (առկայության դեպքում), փողոցի անվանումը, տան (շենքի), բնակարանի համարները, որտեղ բնակվում է մասնակիցը,
19. «19. հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն հեռախոսների միջազգային կոդերը և համարները (բնակության, ծառայողական), որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
20. «20. բջջային հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն բջջային հեռախոսների միջազգային կոդերը և համարները, որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
21. «21. էլեկտրոնային փոստի հասցե» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, որով մասնակիցը նախընտրում է ստանալ տեղեկատվություն մասնակիցների ռեեստրը վարողից, եթե ընտրվել է «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակը,
22. «22. ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և ֆոնդ» դաշտում ձախից V-աձև նշումով ընտրություն է կատարվում որևէ կենսաթոշակային ֆոնդի օգտին: Այն դեպքում, երբ V-աձև նշումով ընտրություն է կատարվում կենսաթոշակային ֆոնդի կառավարչի օգտին, ապա համարվում է ընտրված այդ կառավարչի կողմից առաջարկվող պահպանողական (կոնսերվատիվ) ֆոնդը:
13. «13. լեզու» դաշտում ձախից V-ածև նշումով դիմումատուի ցանկությամբ ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվությունը ստանալու մասնակցի նախընտրելի լեզուն, ընդ որում, կարելի է ընտրել «13.1. հայերեն», «13.2. ռուսերեն» կամ «13.3. անգլերեն» տարբերակներից միայն մեկը, իսկ եթե որևէ ընտրություն չի կատարվում, ապա տեղեկատվությունը ուղարկվում է հայերեն,
14. «14. փոստային ինդեքս» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության վայրի փոստային ինդեքսը,
15. «15. երկիր» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության երկրի անվանումը,

16. «16. վարչատարածքային միավոր» վանդակում պարտադիր լրացվում է մարզի անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը, իսկ Երևան համայնքի դեպքում՝ «Երևան» (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի վարչատարածքային միավորի անվանումը),
17. «17. համայնք (վարչական շրջան)» վանդակում պարտադիր լրացվում է մարզի համայնքի (քաղաքային, գյուղական), իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանի (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի համայնքային միավորի) անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը,
18. «18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան» վանդակում հաջորդաբար պարտադիր լրացվում են բնակավայրի անվանումը (առկայության դեպքում), փողոցի անվանումը, տան (շենքի), բնակարանի համարները, որտեղ բնակվում է մասնակիցը,
19. «19. հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն հեռախոսների միջազգային կոդերը և համարները (բնակության, ծառայողական), որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
20. «20. բջջային հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն բջջային հեռախոսների միջազգային կոդերը և համարները, որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
21. «21. էլեկտրոնային փոստի հասցե» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, որով մասնակիցը նախընտրում է ստանալ տեղեկատվություն մասնակիցների ռեեստրը վարողից, եթե ընտրվել է «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակը,
22. «22. միանվագ վճար ստանալու հիմքը» դաշտում ձախից V-ածև նշումով ընտրվում է մասնակցի՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը իր պարտադիր կուտակային կենսաթոշակային հաշվում առկա միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու հիմքը: Ընդ որում, «22.1. հաշմանդամության երրորդ աստիճան» տարբերակը կարող է նշվել, եթե Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակիցն օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել է աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ: «22.2. առողջության ծայրահեղ ծանր վիճակ» տարբերակը կարող է նշվել, եթե Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն մասնակիցը գտնվում է ծայրահեղ ծանր առողջական վիճակում կամ հիվանդ է կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով:
23. «23. դիմումին կից ներկայացվող փաստաթղթի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի անվանումը,
24. «24. ում կողմից է տրված» վանդակում պարտադիր լրացվում է ՀՀ կառավարության լիազոր մարմնի անվանումը, ում կողմից տրվել է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթուղթը,
25. «25. փաստաթղթի համարը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի նույնականացման համարը,
26. «26. տրման ամսաթիվը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի տրման ամսաթիվը,
27. «27. բանկային հաշվի համարը» վանդակում պարտադիր լրացվում է ՀՀ տարածքում գործող բանկում գտնվող մասնակցի բանկային հաշվի համարը, որին մասնակիցը ցանկանում է, որ մասնակիցների ռեեստրը վարողը փոխանցի իր կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարման արդյունքում առաջացած միջոցները, միանվագ վճարի ձևով,
28. «28. բանկի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ գտնվում է «27. բանկային հաշվի համարը» վանդակում նշված բանկային հաշվի համարը,
29. «29. ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է դիմումը ներկայացնելու ամսաթիվը, (օր/ամիս/տարի ֆորմատով), մասնավորապես՝ 01/01/2014,
30. «30. մասնակցի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին մասնակցի կողմից, իսկ եթե դիմումը ներկայացվել է մասնակցի լիազորված անձի կողմից, ապա վանդակը չի լրացվում,
31. «31. լիազորված անձի անուն, ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի լիազորված անձի անունը և ազգանունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին լիազորված անձի կողմից,
32. «32. լիազորված անձի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի լիազորված անձի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին վերջինիս կողմից:

Հավելված 11
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 284-Ն որոշմամբ

Հավելված 11
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 10/07-ի

<table>
<tr><td colspan="7">ՄԱՍՆԱԿՑԻ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ</td></tr>
<tr><td colspan="7">ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ</td></tr>
<tr><td colspan="2">1. հաճրային ծառայությունների համարանիշ կամ հաճրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար</td><td colspan="2">2. անուն</td><td colspan="3">3. ազգանուն</td></tr>
<tr><td colspan="2"></td><td colspan="2"></td><td colspan="3"></td></tr>
<tr><td>4. ծննդյան ամսաթիվ</td><td colspan="2">5. սեռ</td><td colspan="2">6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ</td><td colspan="2">7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար</td></tr>
<tr><td></td><td colspan="2"></td><td colspan="2"></td><td colspan="2"></td></tr>
<tr><td>8. քաղաքացիություն</td><td colspan="2">9. կենսական շահերի կենտրոն</td><td colspan="3">10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար</td><td>11. ՀՎՀՀ</td></tr>
<tr><td></td><td colspan="2"></td><td colspan="3"></td><td></td></tr>
<tr><td colspan="7">ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՄԻՋՈՑ</td></tr>
<tr><td colspan="3">12. ստացման եղանակ</td><td colspan="4">13. լեզու</td></tr>
<tr><td>12.1. փոստով</td><td>12.2. էլեկտրոնային փոստով</td><td></td><td>13.1. հայերեն</td><td>13.2. ռուսերեն</td><td>13.3. անգլերեն</td><td></td></tr>
<tr><td colspan="7">ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ</td></tr>
<tr><td>14. փոստային ինդեքս</td><td>15. երկիր</td><td>16. վարչատարածքային միավոր</td><td colspan="2">17. համայնք (վարչական շրջան)</td><td colspan="2">18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="2"></td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="3">19. հեռախոսի համար</td><td colspan="2">20. բջջային հեռախոսի համար</td><td colspan="2">21. էլեկտրոնային փոստի հասցե</td></tr>
<tr><td colspan="3"></td><td colspan="2"></td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="7">ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐ</td></tr>
<tr><td colspan="7">22. միանվագ վճար կատարելու հիմքը</td></tr>
<tr><td></td><td colspan="6">22.1. ՀՀ քաղաքացիությունից հրաժարում</td></tr>
<tr><td></td><td colspan="6">22.2. ՀՀ-ից հեռացող օտարերկրացի</td></tr>
<tr><td colspan="3">23. դիմումին կից ներկայացվող փաստաթղթի անվանումը</td><td>24. ում կողմից է տրված</td><td>25. փաստաթղթի համարը</td><td colspan="2">26. տրման ամսաթիվը</td></tr>
<tr><td colspan="3"></td><td></td><td></td><td colspan="2"></td></tr>
<tr><td>27. ստացողի անվանումը</td><td>28. բանկային հաշվի համարը</td><td>29. բանկի անվանումը</td><td>30. բանկի SWIFT/BIC կոդը</td><td colspan="3">31. արտարժույթ</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td colspan="3"></td></tr>
<tr><td colspan="7">ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐՆ ԻՐ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՉԻ ԳՈՎԱԶԴՈՒՄ ՈՐԵՎԷ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՉԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ԿԵՐՊ ՉԻ ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ:
ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԻ ԸՆՏՐԱԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:
ՍՈՒՅՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՒՄ Է ՎՃԱՐ՝ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՂ ՍԱԿԱԳՆԵՐԻ:</td></tr>
<tr><td>32. ամսաթիվ</td><td colspan="2">33. մասնակցի ստորագրություն</td><td colspan="2">34. լիազորված անձի անուն, ազգանուն</td><td colspan="2">35. լիազորված անձի ստորագրություն</td></tr>
<tr><td></td><td colspan="2"></td><td colspan="2"></td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="7">Էջը լրացնելիս օգտվեք դիմումի դարձերեսին տեղադրված ուղեցույցից</td></tr>
</table>

Հավելված 12

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 284-Ն որոշմամբ

Հավելված 12

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ
հաստատված կանոնակարգ 10/07-ի

Մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու դիմումի լրացման ուղեցույց

1. «1. հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի հանրային ծառայությունների համարանիշը, իսկ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում լրացվում է հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (սույն վանդակը լրացվելիս 2-21-րդ վանդակները լրացվում են ինքնաշխատ, եթե մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ հնարավորությունն ապահովված է),
3*(2). «2. անուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի անունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
4*(3). «3. ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ազգանունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում,
5*(4). «4. ծննդյան ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ 01/01/1990,
6*(5). «5. սեռ» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի սեռը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, մասնավորապես՝ իգական՝ Ի, արական՝ Ա,
7* (6). «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված մասնակցի անձը հաստատող վավեր փաստաթղթի տեսակը,
8* (7). «7. անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համար» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի վավեր անձնագրի սերիան և համարը կամ անձը հաստատող այլ վավեր փաստաթղթի նույնականացման համարը, եթե «6. անձը հաստատող փաստաթղթի տեսակ» վանդակում լրացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ նախատեսված անձնագրից բացի այլ փաստաթուղթ, կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի անձնագրի կամ անձի ինքնությունը հաստատող այլ փաստաթղթի նույնականացման համարը,
9* (8). «8. քաղաքացիություն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի քաղաքացիությունը, ինչպես որ նշված է անձը հաստատող փաստաթղթում, իսկ քաղաքացիության բացակայության դեպքում լրացվում է «քաղաքացիություն չունեցող անձ»,
10* (9). «9. կենսական շահերի կենտրոն» վանդակում պարտադիր լրացվում է օտարերկրյա քաղաքացի հանդիսացող մասնակցի կենսական շահերի կենտրոնը (կենսական շահերի կենտրոնն այն վայրն է, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը (բնակության վայրն այն վայրն է, որտեղ անձը մշտապես կամ առավելապես ապրում է), և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը),
11* (10). «10. անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համար» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հաշվառման համարը,
12* (11). «11. ՀՎՀՀ» վանդակում պարտադիր լրացվում է անհատ ձեռնարկատեր հանդիսացող մասնակցի հարկ վճարողի հաշվառման համարը,
13* (12). «12. ստացման եղանակ» դաշտում մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվություն ստանալու եղանակի ընտրության համար կատարվում է ձախից V-աձև նշում (կարելի է ընտրել «12.1. փոստով» կամ «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակներից միայն մեկը),
14* (13). «13. լեզու» դաշտում ձախից V-աձև նշումով դիմումատուի ցանկությամբ ընտրվում է մասնակիցների ռեեստրը վարողից տեղեկատվությունը ստանալու մասնակցի նախընտրելի լեզուն, ընդ որում, կարելի է ընտրել «13.1. հայերեն», «13.2. ռուսերեն» կամ «13.3. անգլերեն» տարբերակներից միայն մեկը, իսկ եթե որևէ ընտրություն չի կատարվում, ապա տեղեկատվությունն ուղարկվում է հայերեն,
15* (14). «14. փոստային ինդեքս» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության վայրի փոստային ինդեքսը,

* *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

16* (15). «15. երկիր» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի բնակության երկրի անվանումը,
17* (16). «16. վարչատարածքային միավոր» վանդակում պարտադիր լրացվում է մարզի անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը, իսկ Երևան համայնքի դեպքում՝ «Երևան» (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի վարչատարածքային միավորի անվանումը),
18* (17). «17. համայնք (վարչական շրջան)» վանդակում պարտադիր լրացվում է մարզի համայնքի (քաղաքային, գյուղական), իսկ Երևան համայնքի դեպքում՝ վարչական շրջանի (օտարերկրյա հասցեի դեպքում՝ տվյալ երկրի համայնքային միավորի) անվանումը, որտեղ բնակվում է մասնակիցը,
19* (18). «18. բնակավայր, փողոց, տուն (շենք), բնակարան» վանդակում հաջորդաբար պարտադիր լրացվում են բնակավայրի անվանումը (առկայության դեպքում), փողոցի անվանումը, տան (շենքի), բնակարանի համարները, որտեղ բնակվում է մասնակիցը,
20* (19). «19. հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն հեռախոսների միջազգային կոդերը և համարները (բնակության, ծառայողական), որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
21* (20). «20. բջջային հեռախոսի համար» վանդակում դիմումատուի ցանկությամբ լրացվում են այն բջջային հեռախոսների միջազգային կոդերը և համարները, որոնցով հնարավոր է կապ հաստատել մասնակցի հետ,
22* (21). «21. էլեկտրոնային փոստի հասցե» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն, որով մասնակիցը նախընտրում է ստանալ տեղեկատվություն մասնակիցների ռեեստրը վարողից, եթե ընտրվել է «12.2. էլեկտրոնային փոստով» վանդակը,
23* (22). «22. միանվագ վճար կատարելու հիմքը» դաշտում ձախից V-ածև նշումով ընտրություն է կատարվում այն տարբերակի օգտին, որը հիմք է հանդիսացել նախքան մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման համար: Ընդ որում, «22.1. ՀՀ քաղաքացիությունից հրաժարում» տարբերակը կարող է նշվել, եթե Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն ՀՀ քաղաքացի մասնակիցը մշտական բնակության նպատակով մեկնում է արտասահման և հրաժարվում է ՀՀ քաղաքացիությունից, «22.2. ՀՀ-ից հեռացող օտարերկրացի» տարբերակը կարող է նշվել, եթե Օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն ՀՀ-ում աշխատող օտարերկրացի մասնակիցը վերադառնում է իր մշտական բնակության երկիր,
24* (23). «23. դիմումին կից ներկայացվող փաստաթղթի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի անվանումը,
25* (24). «24. ում կողմից է տրված» վանդակում պարտադիր լրացվում է ՀՀ կառավարության պետական լիազորված մարմնի անվանումը, ում կողմից տրվել է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթուղթը,
26* (25). «25. փաստաթղթի համարը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի նույնականացման համարը,
27* (26). «26. տրման ամսաթիվը» վանդակում պարտադիր լրացվում է սույն դիմումին կից ներկայացվող միանվագ վճար ստանալու հիմքը հավաստող փաստաթղթի տրման ամսաթիվը,
28* (27). «27. ստացողի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի՝ օտարերկրյա պետությունում ընտրած համապատասխան կենսաթոշակային ֆոնդի կամ ապահովագրական ընկերության կամ համապատասխան այլ ֆինանսական կազմակերպության անվանումը,
29* (28). «28. բանկային հաշվի համարը» վանդակում պարտադիր լրացվում է «27. ստացողի անվանումը» վանդակում նշված կենսաթոշակային ֆոնդի կամ ապահովագրական ընկերության կամ համապատասխան այլ ֆինանսական կազմակերպության այն բանկային հաշվի համարը, որին մասնակիցների ռեեստրը վարողը պետք է փոխանցի մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարման արդյունքում ստացված միջոցները՝ միանվագ վճարի ձևով,
30* (29). «29. բանկի անվանումը» վանդակում պարտադիր լրացվում է այն բանկի անվանումը, որտեղ գտնվում է «28. բանկային հաշվի համարը» վանդակում նշված բանկային հաշվի համարը,
31* (30). «30. բանկի SWIFT/BIC կոդը» վանդակում պարտադիր լրացվում է «29. բանկի անվանումը» վանդակում նշված բանկի SWIFT/BIC (Սվիֆտ/ԲիԱյՍի) կոդը,
32* (31). «31. արտարժույթ» վանդակում պարտադիր լրացվում է այն ազատ փոխարկելի արտարժույթի ISO (ԻՍՕ) կոդը, որով մասնակիցը ցանկանում է, որ մասնակիցների ռեեստրը վարողը փոխանցի իր կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարման արդյունքում ստացված դրամական միջոցները միանվագ վճարի ձևով «28. բանկային հաշվի համարը» վանդակում նշված բանկային հաշվի համարին,
33* (32). «32. ամսաթիվ» վանդակում պարտադիր լրացվում է դիմումը ներկայացնելու ամսաթիվը (օր/ամիս/տարի ֆորմատով), մասնավորապես՝ 01/01/2014,
34* (33). «33. մասնակցի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին մասնակցի կողմից, իսկ եթե դիմումը ներկայացվել է մասնակցի լիազորված անձի կողմից, ապա վանդակը չի լրացվում,
35* (34). «34. լիազորված անձի անուն, ազգանուն» վանդակում պարտադիր լրացվում է մասնակցի լիազորված անձի անունը և ազգանունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին լիազորված անձի կողմից,
36* (35). «35. լիազորված անձի ստորագրություն» վանդակում պարտադիր դրվում է մասնակցի լիազորված անձի ստորագրությունը, եթե սույն դիմումը թղթային ձևով ներկայացվում է հաշվի օպերատորին վերջինիս կողմից:

«Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի ուղղությունները և այդ ծախսերի ու կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարների առավելագույն չափերը» կանոնակարգ 10/25-ը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների օգտագործման արդյունավետությունն ու թափանցիկությունը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 14-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի ուղղությունները և այդ ծախսերի ու կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարների առավելագույն չափերը» կանոնակարգ 10/25-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 313-Ն

Հավելված
Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարար
_____
Դավիթ Սարգսյան
«__» _____ 2013 թ.

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի
թիվ 313-Ն որոշմամբ
_____
Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/25

ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվում են այն ծախսերը, որոնց կատարումը ֆոնդի ակտիվների հաշվին անմիջականորեն նախատեսված է օրենքով:

2. Բացի 1-ին կետով նախատեսված ծախսերից՝ կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կարող են կատարվել նաև այն ծախսերը և վճարները, որոնք ուղղակիորեն կապված են ֆոնդի կառավարման ու պահառության հետ և նախատեսված են տվյալ ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ):

ԳԼՈՒԽ 2. ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ

3. Սույն կանոնակարգի 1-ին գլխում նշված փաստացի ծախսերի տարեկան ընդհանուր մեծությունը չի կարող գերազանցել ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքի 5 տոկոսը: Սույն կանոնակարգի իմաստով՝ ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքը տվյալ տարվա համար ֆոնդի զուտ ակտիվների արժեքների միջին թվաբանական մեծությունն է, որը որոշվում է տարվա ընթացքում հաշվարկված՝ ֆոնդի զուտ ակտիվների արժեքների հանրագումարը բաժանելով տվյալ ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման պարբերականության (տարվա ընթացքում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկների քանակի) վրա:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 9.01.2014 թ. (ՀՀԳՏ N2 (481), 15.01.2014):

*«Կուտակային կենսաթոշակը միանվագ վճարի տեսքով վճարվելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը» կանոնակարգ 10/08-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման միասնական ընթացակարգ,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Կուտակային կենսաթոշակը միանվագ վճարի տեսքով վճարվելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը» կանոնակարգ 10/08-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 314-Ն

Հավելված

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարար
_____
Դավիթ Սարգսյան
«__» _____ 2013 թ.

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի
թիվ 314-Ն որոշմամբ
_____
Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/08

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐԻ ՏԵՍՔՈՎ ՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակցի կողմից միանվագ վճարի տեսքով կենսաթոշակի ստացման դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

1) ***Կանոնակարգ 10/07***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 9.01.2014 թ. (ՀՀԳՏ N2 (481), 15.01.2014):

գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին» թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07,

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Մասնակիցը «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 60-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միանվագ վճար ստանալու իրավունք ձեռք է բերում, եթե լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը, և մասնակցի միջոցները, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը.

1) փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, կամ

2) գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը:

ԳԼՈՒԽ 4. ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԸ

5. Մասնակիցն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միանվագ վճար ստանալու համար մասնակիցների ռեեստրը վարողին Կանոնակարգ 10/07-ով սահմանված ձևով և կարգով ներկայացնում է կենսաթոշակի տեսակի ընտրության դիմում:

ԳԼՈՒԽ 5. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Մասնակիցների ռեեստրը վարողը սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումը ստանալուց հետո օրենքով սահմանված տասնօրյա ժամկետում կազմակերպում է սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումով նախատեսված չափով մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումն ու մարման արդյունքում ստացված միջոցների միանվագ վճարումը սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումում նշված մասնակցի բանկային հաշվին:

7. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումը ստանալուց հետո օրենքով սահմանված տասնօրյա ժամկետում մասնակիցների ռեեստրը վարողը որոշում է ընդունում հատուցման դեպքի առկայության մասին, և հատուցման դեպքի առկայության պարագայում մասնակիցների ռեեստրը վարողը պարտադիր կուտակային կենսաթոշակը միանվագ վճարի վճարելիս սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումով նախատեսված չափով մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումից ստացված գումարին միացնում է օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ստացած հատուցման գումարը:

8. Միանվագ վճարը կատարվում է սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումով նախատեսված չափով:

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի պարտավորությունը Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի նկատմամբ[*]

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը, ստանալով պաշտոնական պարզաբանում տալու միջնորդություն «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) որոշ դրույթների վերաբերյալ, մասնավորապես. *որ դեպքերում, ինչ պայմաններում և ինչ չափով* կարող է ծագել պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի կառավարչի (այսուհետ՝ Կառավարիչ) պարտավորությունը հատուցում վճարած Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի նկատմամբ,

հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածով իրեն վերապահված Պաշտոնական պարզաբանումներ տալու իրավասությունը,

բարձրացված խնդիրների տեսանկյունից անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.

- Ո՞վ է երաշխավորում մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների վերադարձելիությունը
- Ո՞վ է իրականացնում հատուցումը, և ե՞րբ է ծագում հետադարձ պահանջի իրավունքը Կառավարչի նկատմամբ
- Կառավարչի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքի ծագման դեպքում ո՞վ է կրում ապացուցման պարտականությունը
- Որքա՞ն է հետադարձ պահանջի ծավալը
- Ո՞րն է ֆիդուցիար պարտականության շրջանակը:

1. Ո՞վ է երաշխավորում մասնակիցների կատարած կուտակային վճարների վերադարձելիությունը.

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների ամբողջ գումարի՝ ճշգրտված տարեկան գնաճով, վերադարձելիությունը երաշխավորվում է Երաշխիքային ֆոնդի կողմից (20 տոկոսով) և Հայաստանի Հանրապետության կողմից (80 տոկոսով):

2. Ո՞վ է իրականացնում հատուցումը, և ե՞րբ է ծագում հետադարձ պահանջի իրավունքը Կառավարչի նկատմամբ.

Օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն երաշխավորված պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարների՝ ճշգրտված տարեկան գնաճով հատուցումն իրականացնելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը և Երաշխիքային ֆոնդը հատուցած գումարի և հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերի չափով հետադարձ պահանջի իրավունք են ձեռք բերում համապատասխան կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նկատմամբ, եթե հատուցման դեպքն առաջացել է տվյալ կառավարչի գործողությունների կամ անգործության հետևանքով, բացառությամբ, երբ կառավարիչն ապացուցում է, որ գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու վերը նշված հարցերը հետևյալի լույսի ներքո՝

- մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների ամբողջ գումարի վերադարձելիությունը երաշխավորում են Հայաստանի Հանրապետությունը և Երաշխիքային ֆոնդը
- վերջիններս պարտավորվում են իրականացնելու հատուցում
- հատուցումն իրականացնելուց հետո ձեռք են բերում հետադարձ պահանջի իրավունք համապատասխան կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նկատմամբ հետևյալ պայմանների առկայության պարագայում.
  - Հատուցման դեպքն առաջացել է որպես հետևանք Կառավարչի գործողության կամ անգործության, որով խախտվել է կիրառելի օրենք, կանոնակարգ կամ վերջինիս կողմից ստանձնած պայմանագրային պարտավորություն (այսուհետ՝ Կառավարչի Գործողություն), ինչն էլ ապացուցում են Հայաստանի Հանրապետությունը և Երաշխիքային ֆոնդը
  - Կառավարիչը չի ապացուցել, որ գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. հունվարի 14-ին (ՀՀՊՏ N4 (483), 17.02.2014):

3. Կառավարչի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքի ծագման դեպքում ո՞վ է կրում ապացուցման պարտականությունը.

Կառավարչի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքն ապացուցման կարիք ունի, որի համար գործում է երկաստիճան կարգ:

1) Կառավարչի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքի ծագման դեպքում հիմք է ընդունվում այն հանգամանքը, թե արդյոք հատուցման դեպքն առաջացել է կառավարչի գործողության կամ անգործության հետևանքով: Այսպիսով, առաջին փուլում հատուցումը կատարած Հայաստանի Հանրապետությունը և Երաշխիքային ֆոնդը կրում են հատուցման դեպքի՝ Կառավարչի Գործողության հետևանքով առաջացած լինելն ապացուցելու պարտականություն: Անհրաժեշտություն է առաջանում հաստատելու պատճառահետևանքային կապը Կառավարչի Գործողության և առաջացած հետևանքի՝ այն է, հատուցման դեպքի միջև:

   Նշված հոդվածների բովանդակությունից բխում է նաև, որ այն փաստը, որ մասնակցին վերադարձվող գումարը պակաս է ճշգրտված տարեկան գնաճով կատարած պարտադիր կուտակային վճարների գումարից, ինքնին չի հանգեցնում Կառավարչի պատասխանատվության ոչ պատշաճ գործելու համար:

   Արդյունքում Կառավարչի պարտավորությունը հատուցում վճարած կողմերի նկատմամբ չի առաջանում, քանի դեռ հատուցում իրականացրած Հայաստանի Հանրապետությունը և Երաշխիքային ֆոնդը չեն ապացուցում, որ հատուցման դեպքը վրա է հասել Կառավարչի Գործողության հետևանքով:
2) Վերոնշյալն ապացուցելուց հետո ապացուցման բեռը դրվում է Կառավարչի վրա, և երկրորդ փուլում նա պետք է ապացուցի, որ իր գործողությունների կամ անգործության ժամանակ գործել է իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում, ինչի դեպքում ազատվում է վճարում կատարելու պարտականությունից:

Այսպիսով, Կենտրոնական բանկի խորհուրդը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունը և Երաշխիքային ֆոնդը Կառավարչի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունք են ձեռք բերում, եթե ապացուցում են, որ հատուցման դեպքն առաջացել է Կառավարչի Գործողության հետևանքով, իսկ Կառավարիչն էլ իր հերթին չի ապացուցում, որ գործում էր Օրենքով սահմանված իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակներում:

Ընդ որում, վերը նշված 2-րդ կետով սահմանված դրույթը չի կիրառվում ՀՀ կենտրոնական բանկի՝ որպես վերահսկող մարմնի և Կառավարչի միջև ծագած վարչահիրավական հարաբերությունների նկատմամբ: Մասնավորապես, Կենտրոնական բանկի կողմից Կառավարչի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունների խախտման համար վարչական վարույթի հարուցման դեպքում Կառավարչի ֆիդուցիար պարտականությունների խախտման ապացուցման պարտականությունը կրում է ՀՀ կենտրոնական բանկը:

4. Որքա՞ն է հետադարձ պահանջի ծավալը.

Օրենքի 49-րդ հոդվածով երաշխավորելով մասնակցի կուտակային վճարների ամբողջ գումարի վերադարձելիությունը (ճշգրտված տարեկան գնաճով) և սահմանելով հատուցումը կատարած Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի կողմից հետադարձ պահանջի իրավունքը՝ Օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն վերջիններիս պահանջի իրավունքը սահմանափակվում է հատուցված գումարի և հատուցումը տրամադրելու հետ կապված ծախսերի չափով:

Ավելին՝ Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի հետադարձ պահանջի իրավունքը կիրառվում է հատուցման այն մասի նկատմամբ, որը հանդիսանում է Կառավարչի Գործողության հետևանք, ինչպես նաև հատուցման այդ մասը տրամադրելու հետ կապված Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի կրած իրական ծախսերի նկատմամբ:

5. Ո՞րն է ֆիդուցիար պարտականության շրջանակը.

Ֆիդուցիար պարտականությունը անձի պարտականությունն է գործել ի շահ այլ անձի՝ դրսևորելով բարեխղճություն և ողջամտություն: Կառավարիչների՝ ֆիդուցիար պարտականությունների շրջանակն ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքներում:

Մասնավորապես, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի համաձայն կառավարիչը պարտավոր է՝

- ✓ իր պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով ֆոնդի մասնակիցների և իր հաճախորդների շահերից, իրականացնել իր իրավունքները և կատարել ֆոնդի մասնակիցների և

իր հաճախորդների նկատմամբ իր պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով.

- ✓ ձեռնպահ մնալ իր և ֆոնդի մասնակիցների կամ իր հաճախորդների միջև շահերի բախման առարկա համարվող գործարքների կնքումից՝ դրա անհնարինության դեպքում նախապատվությունը տալով ֆոնդի մասնակիցների և հաճախորդի շահերին.
- ✓ իր գործունեության իրականացման ընթացքում ձեռնարկել բավարար միջոցներ իր և ֆոնդի մասնակիցների ու իր հաճախորդների, ինչպես նաև իր տարբեր հաճախորդների, վերջիններ և իր կողմից կառավարվող ֆոնդերի ու տարբեր ֆոնդերի միջև շահերի հնարավոր բախումները կանխելու համար, իսկ դրա անհնարինության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դրանք նվազեցնելու համար.
- ✓ ներդնել կազմակերպական և կառավարչական արդյունավետ միջոցներ՝ իր կողմից ներդրումային առաջարկությունների կազմման և տարածման հետ կապված շահերի բախումները կանխելու համար.
- ✓ ներդրումային ծառայություններ մատուցելու դեպքում պահպանել ՀՀ օրենսդրությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց համար սահմանված այլ պարտականությունները:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Կառավարիչների կողմից իրենց ֆիդուցիար պարտականությունների շրջանակի վերաբերյալ Կենտրոնական բանկ դիմելու դեպքում Կենտրոնական բանկը պատրաստակամ է հայտնել Կառավարչի/կառավարիչների ֆիդուցիար պարտականությունների ծավալի վերաբերյալ իր մասնագիտական կարծիքը և դիրքորոշումը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դատարանում հանդես գալ որպես *amicus curae*:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

հատուցում իրականացրած Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի՝ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նկատմամբ ձեռք բերվող հետադարձ պահանջի իրավունքի վերաբերյալ ***պաշտոնապես պարզաբանում է.***

Օրենքով սահմանված հատուցման իրավիճակի վրա հասնելու դեպքում հատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի կողմից, որոնք էլ իրենց հերթին հատուցված գումարի և հատուցման հետ կապված ծախսերի չափով հետադարձ պահանջի իրավունք են ձեռք բերում համապատասխան կենսաթոշակային ֆոնդի կառավարչի նկատմամբ այն դեպքում, երբ ապացուցում են, որ հատուցման դեպքը Կառավարչի Գործողության հետևանք է, իսկ Կառավարիչն էլ չի ապացուցում, որ գործում էր Օրենքով սահմանված իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում: Մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա կենսաթոշակային ֆոնդի փայերի հաշվարկային արժեքների հանրագումարի՝ սահմանված չափից պակաս լինելը ինքնին չի հանգեցնում Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի նկատմամբ Կառավարչի պարտավորության: Ավելին, Կառավարչի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքը կիրառելի է հատուցման այն մասի նկատմամբ, որը հանդիսանում է Կառավարչի Գործողության հետևանք, ինչպես նաև հատուցման այդ մասը տրամադրելու հետ կապված Հայաստանի Հանրապետության և Երաշխիքային ֆոնդի կրած իրական ծախսերի նկատմամբ:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
23 հունվարի 2014 թ., N1

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2014)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 47

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 50

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 55

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 56

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 67

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի տոկոսադրույք

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 82
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 93
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 95
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 101
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2013թ. դեկտեմբեր*	*2013թ. դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2012թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2014թ. հունվար*	*2014թ. հունվարի իրական աճի ինդեքսը 2013թ. հունվարի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		105.6		101.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	130688.8	103.5	87916.8	96.7
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	798.6	97.8	807.9	99.7
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	58677.2	116.4	15952.9	101.7
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	359234.5	99.8	124986.4	104.6
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	85744.4	93.2	7221.1	99.6
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	105630.7	110.8	78401.1	102.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	195072[1]	102.3	161005[2]	104.8

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2014 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.8	101.1	99.4	101.4
2014 թ. հունվարը 2013 թ. հունվարի համեմատությամբ	105.5	104.2	101.9	103.4

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2012*	*2013*	*2014*	*2014*	*2014*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	3.6	2.9	2.8	2.8	5.5
Փետրվար	-0.9	-0.4			
Մարտ	0.1	0.4			
Ապրիլ	-0.6	-0.1			
Մայիս	-1.3	0.0			
Հունիս	-1.3	-0.1			
Հուլիս	-1.5	0.4			
Օգոստոս	-0.4	0.3			
Սեպտեմբեր	0.8	-0.2			
Հոկտեմբեր	1.2	0.3			
Նոյեմբեր	1.4	0.9			
Դեկտեմբեր	2.1	1.1			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	3.2	5.6			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	2.6	5.8			

ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2014 թ. հունվարը 2013 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)* [3]
ՍԳԻ	**2.8**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**105.10**	**2.73**
Բանջարեղեն և կարտոֆիլ	141.60	2.61
Միրգ	110.60	0.39
Ծխախոտ	103.20	0.13
Կաթնամթերք	100.80	0.03
Կենդանական և բուսական յուղեր	98.70	-0.04
Մսամթերք	99.50	-0.05
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**99.70**	**-0.05**
Մշակույթի ապրանքներ	112.50	0.04
Դեղամիջոցներ	100.40	0.01
Հագուստ և գործվածք	98.90	-0.03
Կոշկեղեն	97.70	-0.04
Ծառայություններ, որից՝	**100.30**	**0.09**
Բուժսպասարկման	102.30	0.09
Հանգստի կազմակերպման	109.70	0.06
Մշակույթի ոլորտի	88.40	0.00
Տրանսպորտի	97.50	-0.08

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[3]

ժամանակաշրջան	2012	2013	2014
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.65	0.79	0.2
Փետրվար	0.08	0.21	
Մարտ	0.04	0.53	
Ապրիլ	0.02	0.51	
Մայիս	-0.16	0.38	
Հունիս	0.35	0.54	
Հուլիս	0.14	0.09	
Օգոստոս	-0.06	0.11	
Սեպտեմբեր	0.67	0.28	
Հոկտեմբեր	0.73	0.29	
